ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Տեղեկատվական նյութ

2021

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության վիճակագրության պաշտոնական տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ Հանրապետությունում հաշվառված է 194.640 հաշմանդամություն ունեցող անձ, որը կազմում է ՀՀ ազգաբնակչության 6.5%-ը, մինչդեռ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) տվյալներով աշխարհում բնակչության մոտավորապես 15%-ը (ավելի քան մեկ միլիարդ մարդ) ունի հաշմանդամություն:
Հայաստանի Հանրապետությունում գրանցված հաշմանդամություն ունեցող անձանց 52,3%-ը /101.805 անձ /՝ 18-65 տարեկան են:
2007 թվականի դեկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա): 2010 թվականի սեպտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս Ազգային ժողովի, վավերացրել է Կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել մեկ ամիս անց:
Կոնվենցիայի Կամընտիր արձանագրությունը, որով սահմանվում են Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե անհատական գանգատ ներկայացնելու ընթացակարգ, ՀՀ-ի կողմից դեռ չի վավերացվել, թեև 2007 թվականին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել էր այս փաստաթուղթը կոնվենցիայի հետ միասին:
ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը երաշխավորում է հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և մյուսների հետ հավասար հիմունքներով դրանցից օգտվելու հնարավորությունը:
Բարձրացված հարցի կապակցությամբ պետք է արձանագրել նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեի մտահոգությունը: Այսպես, Կոմիտեն մտահոգված է, որ հաշմանդամություն ունեցող անձինք չեն մասնակցում ընտրական գործընթացներին մյուսների հետ հավասար հիմունքներով, ինչը ընտրատեղամասերի անմատչելիության, աջակցության ծառայությունների բացակայության և ընտրություններին առնչվող տեղեկատվության մատչելիության ձևաչափերի բացակայության հետևանք է: **Մտահոգիչ է նաև հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց, ցածր մասնակցությունը հանրային և քաղաքական կյանքում որոշումների կայացմանը:** Ըստ այդմ, Կոմիտեն առաջարկել է ձեռնարկել օրենսդրական և այլ միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են հնարավորություն ընձեռելու համար հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մասնակցել հանրային և քաղաքական կյանքին (ներառյալ ընտրելու և ընտրվելու իրավունքը), ապահովել, որ ընտրական գործընթացները, վայրերը և միջոցները մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց, խթանել

հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես կանանց, մասնակցությունը քաղաքական կյանքում և հանրային որոշումների կայացմանը:

Կոնվենցիայի 29-րդ հոդվածն անդրադառնում է քաղաքական կյանքին մասնակցությանը: Կոնվենցիան վավերացրած պետությունները երաշխավորում են հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքները և պարտավորվում են՝

- Ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք արդյունավետ ու լիակատար մասնակցություն ունենան քաղաքական ու հասարակական կյանքին, այդ թվում՝ այլոց հետ հավասարազոր հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով՝ ներառյալ ընտրելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը:
- Ապահովել, որ ընտրությունների ընթացակարգերը, շենքերը և նյութերը համապատասխան, մատչելի, հասկանալի ու օգտագործելի լինեն նրանց համար:
- Պաշտպանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը՝ ընտրություն կատարելու գաղտնի քվեարկությամբ ընտրությունների և հանրաքվեների ժամանակ՝ առանց սպառնալիքների, ինչպես նաև ապահովել կառավարության բոլոր մակարդակներում ընտրվելու, պաշտոն զբաղեցնելու և հանրային գործառույթներ իրականացնելու նրանց իրավունքի իրացումը՝ դյուրացնելով <u>օժանդակող և նոր տեխնոլոգիաների օգտագործումը, երբ անհրաժեշտ է:</u>

Ներպետական օրենսդրությունն արտացոլում է միջազգային փաստաթղթերով Հայաստանի ստանձնած պարտավորությունները, մասնավորապես ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածն ամրագրում է ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքը՝ գաղտնի քվեարկությամբ:
2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունած Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքի 5-րդ գլխի հոդված 15-ը (Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական իրավունքների իրականացումը, ապահովումը, խթանումը և ազատությունների պաշտպանությունը) 2-րդ կետում անդրադառնում է քաղաքական մասնակցությանը. *պետությունն ապահովում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և աջակցում է դրանց լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության հիմքով որևէ խտրականության, միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով արդյունավետ ու լիարժեք մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքին, ներառյալ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը:*

ՀՀ Ընտրական օրենսգիրքը ևս ամրագրում է *հավասար ընտրական իրավունքը* և հակախտրականության կանոնը. մասնավորապես, ԸՕ-ի 3-րդ հոդվածով սահմանված են՝

1. Ընտրողներն ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով:
2. Պետությունը հավասար պայմաններ է ապահովում ընտրողների ընտրական իրավունքի իրականացման համար:
3. Ընտրողները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ընտրելու և ընտրվելու իրավունք ունեն:

Թեև ՀՀ Սահմանադրությամբ և ընտրական օրենսդրությամբ ամրագրված են հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքներն ու դրանց իրացման հնարավորությունները, այդուհանդերձ *Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով ՄԱԿ-ի կոմիտեն* 2017թ. Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում հայտնել է մի շարք մտահոգություններ, մասնավորապես՝ *«Կոմիտեն մտահոգված է, որ հաշմանդամություն ունեցող անձինք չեն մասնակցում ընտրական գործընթացներին մյուսների հետ հավասար հիմունքներով, ինչը տեղամասային կենտրոնների անմատչելիության, աջակցության ծառայությունների բացակայության և ընտրություններին առնչվող տեղեկատվության մատչելի ձևաչափերի բացակայության արդյունքն է: Մտահոգիչ է նաև հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց) ցածր մասնակցությունը հանրային և քաղաքական կյանքում որոշումների կայացմանը: Կոմիտեն առաջարկում է անդամ պետությանը ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցառումներ՝ հնարավորություն ընձեռելու համար հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մասնակցել հանրային և քաղաքական կյանքին (ներառյալ ընտրելու և ընտրվելու իրավունքը), ապահովել, որ ընտրական գործընթացները, վայրերը և միջոցները մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց համար, խթանել հաշմանդամություն ունեցող անձանց, հատկապես կանանց, մասնակցությունը հանրային որոշումների կայացմանը»:*

Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքին է անդրադառնում նաև *ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016թ. նոյեմբերի 22-ի* «Քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար քվեարկությունը մատչելի դարձնելու նպատակով լրացուցիչ հնարավորություններ սահմանելու մասին» *N 136-Ն* որոշումը:

Հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող անարգել իրացնել իրենց քվեարկության իրավունքը, չեն կարող ընտրություններում հավասար սկզբունքներով ու հավասար պայմաններում հանդես գալ որպես թեկնածու, հանձնաժողովի անդամ, դիտորդ, լիազորված անձ կամ ընտրող: Ընդհանուր առմամբ, ընտրությունների բոլոր փուլերում ընտրական գործընթացը

մատչելի չէ հաշմանդամություն ունեցող տարբեր խմբերի համար: Հաշմանդամություն ունեցող անձինք իրենց ընտրական իրավունքն իրացնելիս բախվում են տեղամասային կենտրոնների ֆիզիկական անմատչելիության, մատչելի տեղեկատվության բացակայության և այլ խնդիրների:

Հայաստանում անգործունակ ճանաչված հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք քվեարկելու իրավունք չունեն: Բայց նրանք, ովքեր մասնակցում են ընտրություններին և գնում են քվեարկելու իրենց ընտանիքի անդամների հետ, ընտրատեղամասում ենթարկվում են խտրականության ընտրատարածքի այլ աշխատակիցների կողմից: Ընտրատեղամասի աշխատողներից շատերը չունեն հմտություններ և հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու ճիշտ վարքագիծ: Մեծամասամբ ընտանիքի անդամներն են ուղղորդում իրենց ընտրելիս:

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈՒԼԵՐԸ



Հաշմանդամություն ունեցող անձինք ընտրությունների ընթացքում կարող են հանդես գալ՝ որպես

1. Ընտրող
2. Վստահված անձ
3. Դիտորդ
4. Հանձնաժողովի անդամ
5. Հանձնաժողովի նախագահ կամ քարտուղար
6. Թեկնածու

7. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ
8. Եվ այլն…

Ինչու՞ է կարևոր հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ընտրություններին՝ որպես թեկնածու

- Ներառական օրենքների ընդունում
- Իրենց խնդիրների բարձրաձայնում
- Մասնակցություն երկրի զարգացման գործընթացին
- Խնդիրներին ճիշտ լուծում տալ
- Հաշմանդամություն ունեցող անձանց սահմանադրական իրավունքն է

Ինչու՞ է կարևոր հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ընտրություններին՝ որպես դիտորդ

- Հնարավորություն կունենա մասնակից լինել ընտրական գործընթացին
- Չի ներկայացնի ոչ մեկի շահերը, և կունենա անաչառ հսկողության հնարավորություն
- Ձեռք կբերի փորձ ընտրական գործընթացում

Նախընտրական քարոզարշավի կարևորությունը

- Ծանոթանալ թեկնածուի նախընտրական ծրագրին
- Գիտակցված ընտրություն կատարել՝ հիմնվելով սեփական համոզմունքների վրա
- Ճանաչել քաղաքական ուժերի հայացքները և մոտեցումները
- Գիտակցել, որ թեկնածուի նախընտրական ծրագիրը ընտրվելուց հետո լինելու է պետական քաղաքականության մի մաս
- Լուծումներ նախընտրական, ընտրական և հետընտրական գործընթացները մատչելի դարձնելու համար

Լուծումներ նախընտրական, ընտրական և հետընտրական գործընթացները մատչելի դարձնելու համար

Մատչելիության ապահովում

- **Ենթակառուցվածքներ**

- Ընտրատեղամասերում թեքահարթակների առկայություն
- Դռների համապատասխան լայնություն
- Քվեախցիկների հարմարություն

- Տրանսպորտի մատչելիություն
- Կանգառների և կայանատեղերի մատչելիություն
- Հանդիպումների մատչելի տարածք

- **Հաղորդակցություն**

- Հանձնաժողովի անդամների վերապատրաստում
- Ժեստերի լեզվի թարգմանիչների ներկայություն

- **Ինֆորմացիայի տրամադրում**

- Կուսակցությունների ընտրական ծրագրերի մատչելիություն
- Բրայլյան գրերի կիրառում և աուդիոտարբերակի առկայություն
- Ենթագրերի առկայություն և ժեստերի լեզվի թարգմանություն
- Հեշտ ընթերցվող տպագրության կիրառում
- Հեռուստաընկերությունների ծրագրերի մատչելի ձևաչափ

- Պետությունը պետբյուջեից և միջազգային կառույցներից հատկացվող գումարներից պարտավոր է որոշակի գումար հատկացնել ընտրական գործընթացի մատչելիության, բարփոխումների ապահովման համար:
- Իրավապաշտպան ՀԿ-ները, մարդու իրավունքերի պաշտպանը մատչելիության համար պետք է պահանջեն այն կառույցներից, ովքեր կազմակերպում են ընտրությունները:
- Հաշմանդամություն ունեցող անձը պետք է լինի նախաձեռնող, իմանա իր իրավունքները և բարձրաձայնի ընտրական գործընթացին իր մասնակցությունը խոչընդոտող խնդիրների մասին:

Լուծումներ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական գործընթացներին ակտիվ մասնակցության համար

- Հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակությունը իրազեկման և կարողությունների զարգացման դասընթացներին
- Հաշմանդամություն ունեցող անձը պետք է տեր կանգնի իր իրավունքներին
- Գիտակցի իր մասնակցնության կարևորությունը

Ու՞մ կարող եք դիմել, եթե խախտվել է ձեր ընտրական իրավունքը

Հրավիրել ԶԼՄ-ներին և բարձրաձայնել խնդրի առկայությունը

Զանգահարել թեժ գիծ

Դիմել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

Ինքնուրույն տեսանկարահանել իրավիճակը և ուղարկել Ագաթ ՀԿ-ի ֆեյսբուքյան էջին
facebook.com/agate.ngo

ԸՆՏՐԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԹԵԺ ԳԻԾ

ՀՀ գլխավոր դատախազություն	010 51 16 03
Կենտրոնական ընտրական հանձնաժողով	010 54 53 59 010 54 53 76 010 52 86 73
Մարդու Իրավունքների Պաշտպանի գրասենյան	116 (անվճար) 096 116 100
Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե	010 53 38 95 093 10 70 85
ՀՀ ոստիկանություն	010 59 69 66
«Հետք»	010 56 33 63 010 58 02 19 077 58 02 19
«Ազատություն»	010 54 40 19
«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնություն	094 56 96 89
«Անկախ դիտորդ» դաշինք	077 342268 041 12 33 02
«Ականատես» դիտորդական նախաձեռնություն	096 965007
Ագաթ ՀԿ ֆեսբուքյան էջ	facebook.com/agate.ngo

Նյութը պատրաստվել է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից «Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի անարգել իրացում Շիրակի մարզում» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է «Ընտրություններ բոլորի համար 2021-տեղական դիտորդություն և քաղաքացիական հասարակության կողմից քաղաքացիների իրավազորում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՕքսԵՋեն հիմնադրամի, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի և Քաղաքական դասընթացների երևանյան դպրոցի հետ համատեղ:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից: Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ն և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները: